



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Steve Frintner, President
Charlene Tabet, Vice President
Steve Ferguson, Clerk
Dr. Emily Weisberg
Dr. Armond Aghakhanian

Superintendent
Matt Hill, Ed.D.

March 19, 2021

Բրբենքի հարգելի աշակերտներ, ընտանիքներ և աշխատակիցներ.

Բրբենքի ուսուցիչների ասոցիացիան (BTA) և Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը համաձայնության են եկել, որ բոլոր աշակերտների համար վերաբացեն դպրոցները **ապրիլի 12-ին**:

Մենք կհանդիպենք մարտի 29-ին մանրամասները վերաջնակացնելու համար, բայց մենք համաձայնության ենք եկել, որ դասերը շարունակվեն առավոտյան հեռակա ուսուցման մոդելով, իսկ կեսօրից հետո՝ անձամբ: Այն աշակերտները, ովքեր ցանկանում են մասնակցել հիբրիդ մոդելին, կհաճախեն դպրոցը շաբաթը 2 անգամ՝ Ա և Բ հերթափոխներով: Դպրոցի տնօրենները կորոշեն, թե ով որ հերթափոխում է լինելու և կտեղեկացնեն ձեզ: Ավելի շատ մանրամասների հետ կձանոթանաք մարտի 29-ի շաբաթը: Միաժամանակ, մենք շատ ուրախ ենք, որ աշակերտները վերադառնում են դպրոց, ինչպես նաև աջակցում ենք նրանց, ովքեր շարունակում են ուսումը 100% հեռակա եղանակով:

Հաճախակի տրվող հարցեր

Ո՞րն է ԲԴՄՇ-ի անվտանգության կանոնները:

- COVID-19-ի կանխարգելման ծրագիրը https://drive.google.com/file/d/1KmOXrGl37ioIDNvikH04_kFnt6iRHT29/view
- COVID-ի ղեկավարում և ազդեցության կառավարման ծրագիրը <https://www.burbankusd.org/Page/3080>
- Այս տեսաժապավենն անվտանգության համար մեր կատարած փոփոխությունների մասին է. <https://www.youtube.com/watch?v=kyO53qoIgxQ>
- MERV-13 (հիվանդանոցի մակրոպակի) գոտիչների թարմացում <https://www.burbankusd.org/Page/3210>
- Մաքրման հրահանգներ. https://drive.google.com/file/d/1DaAUIE8F4xz1wOXZbV_83cYmAm-0tdx2/view

Որո՞նք են Լոս Անջելեսի հանրային առողջապահական գրասենյակի հրահանգները:

- Ներկայիս մակարդակը (Լոս Անջելեսի գավառը գտնվում է կարմիր մակարդակում՝ 4.1 հիվանդ բնակչության յուրաքանչյուր 100,000 հոգու դիմաց). <https://covid19.ca.gov/safer-economy/#county-status>

- ԱՄ-12 դասարանների վերաբացման հրահանգներ http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protocols/Reopening_K12Schools.pdf

Որո՞նք են ճանապարհորդության ներկայիս սահմանափակումները:

Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության գրասենյակի ներկայիս [խորհուրդները ճանապարհորդության համար](#). Կալիֆոռնիայից դուրս ճանփորդելու դեպքում, տուն վերադառնալիս պետք է 10 օր կարանտինի մեջ մնալ, նույնիսկ եթե դուք ստացել եք COVID-19-ի քննության բացասական պատասխան: Այս առաջարկները վերաբերվում են նաև պատվաստանյութ ստացած անձանց:

Հոգատարությամբ,

Դոկտոր Մաթ Հիլլ

Գերատեսուչ